Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

LGM
1176

1999

ՀԻՍՈՒՍԱՆԳ

Վ. ԵՍՈՆ ԲԱՆՏԻՈՒԹԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱՑ

1860

UNIVERSITY

ՀԻՇԱՏԱԿ

Վ. ԱՍԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ

ԱԶԳԱՑԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱՑ

375

Պատրիարքական կնիքով չը վաւերաց-
եալ օրինակաց ճշդութիւնը երաշխա-
ւորել չէ։

2Ф. 1178

41176-ԿՈ

Ս. Էջմիածնի Տպարան։

ՀՐԱՀԱՆԳ

ՀԱՄՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱՑ

Ի ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

1. Ազգային երեսփոխանաց ընտրութիւնը գաւառներու մէջ երկու ամսեան և ի Պոլիս մէկ ամսեան մէջ կատարելու պայմանով՝ Ընդհանուր ժողովին նորոգելու օրէն երկու ամիս առաջ գաւառաց առաջնորդներուն և մէկ ամիս առաջ Պոլսի Թաղական խորհուրդներուն կը ծանուցնէ Սրբազան Պատրիարքը ամեն մէկ գաւառէն և ամեն մէկ Թաղէն ուզված երեսփոխանաց Թիւը ըստ բաշխման ցուցակին, և կը հրաւիրէ գաւառներու մէջ ընդհանուր ժողով գումարել և Պոլսի եկեղեցեաց մէջ ընտրողական ժողով կազմել, յիշելով Սահմանադրութեան ընտրական օրէնքները (Յօդ. 89, 90, 91) և միանգամայն ընտրութեան կանոնաց վրայ հետեւեալ հրահանգները տալով Պոլսի և գաւառաց։

ՀՐԱՀԱՆԳ ՊՕԼՍԻ ԹԱՂԵՐՈՒՆ

Ընտրողական ժողովք Պոշսի

2. Պատրիարքական հրաւէրը ստացածնուն պէս՝ խնդրէն պիտի ընտրեն Թաղական խորհուրդները, կամ անոնց բացակայութեանը՝ Թաղին եկեղեցւոյ քարոզիչն ու աւագերէցը ընտրողական ժողով կազմել խորհրդարանը իր Թաղին մէջ։

3. Ընտրողական ժողով պիտի կազմվի Թաղին բնակիչներէն ընտրողութեան պայմաններն ունեցող այն-

պիտի անձանցմէ որոնց Ընդհանուր ժողովին մէջ երես-
փոխանաց հետ անդամներէն ընտրելու արժանաւորու-
թիւնը արդէն վկայեալ կը համարուի կամ Ազգին կամ
Տէրութեան կողմէն (տես Սահմանադրութեան 9 յօ-
դուածին չորրորդ հատուածը)։

4. Ընտրողական ժողովը 21 հոգիէ պիտի բաղկա-
նայ. եթէ թաղի մը մէջ վերոյիշեալ անձինքը այս թիւը
չը լցնեն, պակասը նոյն թաղին մէջ ուսումնական ճանչ-
ված կամ էն շատ տուքը տուօղ ընտրողացմէ պէտք է
լցնել. իսկ եթէ այս թիւէն աւելի ըլլան, այն առնն
վիճակով պէտք է ընտրել անոնց մէջէն 21 հոգին։

5. Ընտրողական ժողովին նախագահ՝ եկեղեցական-
քարոզիչը կամ անոր բացակայութեանը աւագերէցն
է. իր դիւանը կը բաղկանայ մէկ առեւնագրէն, մէկ
առեւնադպրէ, և քննիչներէ որոնք՝ թաղին մեծու-
թեանն ու գործօղութեանց ընդարձակութեանը նայե-
լով՝ երեք կամ չորս կ'ըլլան, երկուքը ժողովին ծերա-
գոյն անդամներէն և երկուքը մատաղագոյն անդամ-
ներէն։

Ընտրողական ժողովը թաղական խորհուրդին հետ
միանալով պիտի նախագահէ ընտրական գործողու-
թեանց։

6. Ընտրողական ժողովներուն պաշտօնը պիտի
ըլլայ իւրաքանչիւրն իր թաղին մէջ ընտրական գործո-
ղութիւնները տրված հրահանգին համեմատ տնօրինել,
ընտրողաց և ընտրելեաց ցանկերը պատրաստել, քըւէ-
արկութեանց ըստ կանոնի գործադրութեանն ու քը-
ւէհամարի ճշդըրտութեանը հսկել, և այս բոլոր գոր-
ծողութեանց առեւնագրութիւնը ճշդիւ արձանագրել
յատուկ մատեանի մը մէջ, իր ամէն մէկ նիստը դի-
ւանին անդամոց ստորագրութեամբը վաւերացեալ
ըլլալով։

7. Ընտրողական ժողովներուն պարտաւորութիւնն

է ընտրյալց և ընտրելեաց ցանկերը պատրաստելէն ու բացատրելէն ետքը՝ ամեն միջոց ի գործ դնել զայն ցանկերը ընտրյալց հաղորդելու համար, նոյնպէս և քրիստոնէական դրված օրը այսինքն քրիստարկութեան խնդրելու օրը։ Այս համար նախ՝ օրացրի միջոցով գոնէ երեք օր առաջ պիտի ծանուցնէ իւրաքանչիւր ընտրական ժողով "իր ընտրյալց ցանկին բացվելն ու գոյվելու օրը և իր թաղին քրիստարկութեան օրը"։ Երկրորդ՝ եկեղեցւոյ մէջ յատուկ ծանուցմամբ պիտի հրաւիրէ ժողովուրդը որ "դուրսը դրված ցանկերն աչքէ անցնեն և հրահանգը ուշադրութեամբ կարդան ու անոր համեմատ վարվին, և մանաւանդ քրիստոնէական դրված օրը ամեն ընտրողներ քրիստոնէական բերրեն ձգեն ու մանակից ըլլան ընտրութեան, ինչպէս որ ամենուն իրաւունքն ու պարտքն է"։

8. Ընտրական ժողովները իրաւունք ունին դատելու ընտրութեանց մէջ խարդախութիւն բանեցնողները և քրիստոնէական տալու իրաւունքէն արգիլելու։

9. Ընտրութեան ժողովարանին բարեկարգութեան հոգը նախագահին ու ատենապետին կը վերաբերի։

10. Ընտրական ժողովները միմիայն ընտրական գործողութեանց պիտի զբաղին. իրենց պաշտօնը ընտրութեանց հետ կ'աւարտի։

ԳՈՐԾՕՂՈՒԹԻՒՆՔ ԸՆՏՐՕՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ

ա. Ընտրյալց ցանկ

11. Ընտրական ժողովները՝ իւրաքանչիւրն իր թաղին մէջ՝ ընտրողութեան պայմաններն ըստ գրելոյ ըստ 89, 90 յօդ. Սահմանադրութեան, ընտրյալց ցանկ մը պիտի պատրաստեն այբուբենի կարգով, որոց մէջ պիտի առնեն թաղին բոլոր ընտրողները, այսինքն այն անձինքը որոնք 25 տարին լրացուցած են և ընտրե-

ու իրաւունքէն չեն զրկեալ ըստ 90 երորդ յօդուածին Սահմանադրութեան։

Ընտրութեան կարգը մակաւորներէն պիտի բռնելի որոնք առաջ պիտի դրվին և անուններըը եռքը, յետոյ բնակութիւն կամ արհեստ եթէ համանուններու հետ շփոթութիւն տալու տեղի կայ։

12. Ընտրողաց ցանկը քննարկութեան օրէն դուռնէ ութ օր առաջ պիտի բացվի և եկեղեցւոյ բակին մէջ բացադրված պիտի մնայ տեսս ժողովրդեան, որպէս զի ընտրողներն իրենց անուանը կամ մականուանը վրայ մոռացման կամ սխալման և այլ որ և է արբադրութեան վերաբերեալ դիտողութիւն ունին նէ կարենան ընել։

Այս դիտողութիւնները Ընտրողական ժողովին նախագահին կ'ըլլայ կամ եկեղեցւոյ առաջնորդին, որոնք իրաւացի դատած արբադրութիւններին կ'ընեն ցանկին վրայ։ Եթէ ծանրակէկ խնդիր մը պատահի, Ընտրողական ժողովը կը դատէ։

13. Ընտրողական ժողովը զգոյշ կենայ որ մէկը չը կարենայ միանգամայն երկու թաղի մէջ քըւէ տալ. ասոր համար պէտք է հոգէ որ ընտրողաց ցանկին մէջ չը գրվին այնպիսիք որոնք թաղին բնիկ բնակիչները չ'են, այլ իբրեւ հիւր կամ օգտակարութեան համար եկած և առժամանակեայ բնակեալ կը գտվին նոյն թաղին մէջ։ Սոնք իրենց հատատ բնակութիւնը որ թաղի մէջ է նէ նոյն թաղին մէջ պէտք է գրվին և հոն քըւէարկեն։

14. Ընտրողաց ցանկին նայելով և անոր բացված օրէն՝ ժողովին նախագահը ամեն մէկ ընտրողի տալու համար ընտրողագիրներ պիտի պատրաստէ այն օրինակ.

(այս անուն) ընտրող

(այս քանի) թաղին

(Պատրիարքարանի նախագահին և թղթատարին)

Եր տակը սա յատուկ ծանօթութեամբ.

Յ. Ծ. Քըւէարկելը (այս քանի օր) պիտի տրվի։

Ընտրողագրին մէջ ընտրողին այն անունն առաջ պիտի դրվի՝ որ անունն որ ցանկին մէջ առաջ դրված է։

15. Ընտրողները ցանկին բացված օրէն ըսկսելով պիտի երթան առնեն կամ զրկեն առնել տան ընտրողագրիրնին եկեղեցւոյ խորհրդարանէն, ուր նախագահը կամ անոր կողմէն երկու կամ մէկ քահանայ ընտրողագիր բաժնելու համար միշտ ներկայ պիտի գտվին մինչեւ ցանկին գոցվելու օրը։

Ընտրողագիր բաժնողը ցանկին մէջ ընտրողին անուան առաջը պիտի նշանակէ ը գրով (ընտրողագիրը տրված ըսելու համար)։

16. Միացեալ Թագերու մէջ ուր որ ընտրողական ժողովը կայ, եկեղեցւոյ քարոզիչը, կամ՝ անոր բացակայութեանը, աւագերէցը տեղւոյն Թագաւոր խորհրդին հետ միանալով, պիտի պատրաստեն ընտրողաց ցանկը և իրենց եկեղեցւոյն մէջ պիտի բացադրեն. նոյնպէս և ցանկին համեմատ ընտրողագիրները պիտի պատրաստեն ու բաժնեն։

17. Ընտրողաց ցանկը եկեղեցւոյն բակը դրված օրէն բացված կը սեպվի, և քրիստարկութեան օրին նախընթաց երկուանը կը գոցվի։

Բացված և գոցվելու օրը ցանկին մէջ յստակ ճանաչելի նշանակված պիտի ըլլայ և օրագրի միջոցով հրատարակված, նոյնպէս և քրիստուին դրվելու օրը։

18. Ընտրողաց ցանկը գոցվելէն ետքը՝ ոչ ոք իրաւունք ունի մուտացման կամ այլ օր և է արբատրութեան վերաբերեալ բողոք ընելու։

Բ. Ընտրեշեաց ցանկ

19. Ընտրողական ժողովը ընտրութեան պայմաններն ըստուգելով ըստ 91 յօդ. Սահմանադրութեան, և արժանիքը քննելով՝ ընտրելոց ցանկ մը պիտի

պատրաստէ որ պիտի բաղկանայ թաղէն ուղված երեսփոխանաց թիւէն եռապատիկ աւելի անուններէ։ Այս ցանկը ժողովին մէջ գաղտնի քըւէարկութեամբ և սոսկ հատիսպիտան առաւելութեամբ կ'որոշվի (տես Հրահանգիս 44 յօդուածին երրորդ հատուածը)։

20. Ընտրողական ժողովը ընտրողաց ցանկին քով ընտրելեաց ցանկն ալ բացադրել պիտի տայ եկեղեցւոյ բակը. օրինակ մը այս ցանկէն իր միացեալ թաղերուն պիտի ղրկէ՝ եթէ միացեալ թաղ ունի՝ հոն ալ եկեղեցւոյ բակը բացադրելու համար, և օրինակ մը լրագրի միջոցով պիտի հրատարակէ ներկայ հրահանգին հետևեալ յօդուածովը մէկտեղ (21)։

21. Գիտնալու է որ ընտրելեաց ցանկին ճշդիւ հետևելու ըստիպում չկայ.—քըւէներն ազատ են.—ասի միայն դիւրութիւն տալու համար է անոնց ոչ ընչք իրենց մտքին մէջ ընտրելի չ'են որոշած։

Գիտնալու է նաև թէ ընտրելիները հարկ չ'է որ ընտրող թաղին բնակիչներէն ըլլան, բաւական է որ 30 տարին լրացուցած, Սահմանադրութեան 90ը յօդուածին նշանակած արատները չ'ունեցող, և պատուորութեան ու ազգասէրութեան մասին ընտրողաց համարումն ըստացած անձինք ըլլան, փոյթ չ'է ո՞ր թաղէ, ո՞ր երկրէ, ո՞ր արհեստէ, կամ ո՞ր դասէ ըլլալնին. զի երեսփոխանները չէ թէ այս ինչ թաղին կամ երկրին կամ դասին երեսփոխաններըը կըսեպվին Ընդհանուր ժողովին մէջ, այլ Ազգին երեսփոխաններն են ամենքը համազօր իշխանութեամբ (93 Յօդ. Սահմանադր.)։

Գ. Կանոն քըւէարկութեան

22. Ոչ ոք կրնայ քըւէարկել եթէ իր անունը ընտրողաց ցանկին մէջ գրված չ'ըլլայ և ընտրողական չ'ներկայացնէ։

23. Քրիստոնէութիւնը գաղտնի է, և զոց քրիստ-թուղթով պիտի ըլլայ։

Քրիստոնէութիւնը ճերմակ թուղթի մը կըտոր պիտի ըլլայ որոց վրայ քրիստոնեաներն իրենց ընտրելու երեսփոխանաց անունները պիտի գրեն. անունները վերէն ի վար կարգով գրված պիտի ըլլան, և եթէ ուրիշ համանուններու հետ շփոթելու տեղի կայ, բնակութիւն և արհեստ ալ պէտք է նշանակված ըլլայ ամեն մէկ անուան առջեւ. ուզված երեսփոխանաց թիւէն աւելի անուն չը պիտի պարունակէ քրիստոնեութիւնը և ոչ ըստորագրութիւն կամ այլ որ և է յայտարար նշան։

24. Քրիստոնէութիւնը պէտք է որ տէրունի կամ տօնելի օրվան մը մէջ ըլլայ և ըսկսած օրը լմննայ. ոչ որ այն օրը չը ներկայանայ իրաւունք չ'ունի եաքը բողքելու (102 Յօդ. Սահմանադրութեան)։

25. Քրիստոնեայց ներկայութիւնը իրենց ըստորագրութեամբը կ'ըստուգվի. ուստի թէ քրիստոնեութիւնն ըսկսած օրը լմննալու համար և թէ նոյն օրը անձամբ ներկայանալու արգելք ունեցողները իրենց իրաւունքէն զուրկ չը մնալու համար, իրենց ձեռագիրն ըլլալուն պատասխանատու մնալով՝ քրիստոնեաք իրարու ներկայութիւն ըստորագրութիւններին պիտի ղրկեն քրիստոնեութիւնն հետ մէկ տեղ։

26. Քրիստոնէութիւնը՝ ոչն հրահանգին 23ը յօդուածին պահանջած պայմաններուն ըստ ամենայնի համաձայն ըլլալէն զատ՝ պէտք է որ առանձին ծալած ներփակված ըլլայ նամակի ձեւով փոքրիկ պահարանի մը մէջ։

Պահարան նամակը սա հետեւեալ խօսքին խնամքը գրելէ պիտի պարունակէ քրիստոնեայքին ըստորագրութեամբը. "Ազգային երեսփոխանաց ընտրութիւնը համար՝ (այս ինչ) խաղին ընտրողաց ցանկին մէջ անուանս գրված ըլլալով՝ քրիստոնեայ նոյն խաղին Ընտրողական ժողովին մէջ ներկայանալ կ'ըստորագրեմ"։

(Ընտրութիւն և թ. բառին)։

Այս պահարանը կնքեալ և վրան գրված պիտի ըլլայ քըւէարկուին անունը նոյն կարգով ինչպէս որ գրված է ընտրողացուցակին մէջ (տե՛ս Հրահանգիս 14ը յօդուածին երկրորդ հատուածը)։

27. Քըւէթուղթերը ձգելու համար մէյմէկ գոց քըւէտուփ պիտի գրվի ամեն մէկ թաղի եկեղեցւոյ բակին մէջ բանկալ ըսված տեղին մօտ, վրան խոշոր գրով ՔԸՒԷՏՈՒՓ գրված և ո՛ր թաղին ըլլալը նշանակված։

Քըւէտուփը գանձանակի ձեւով պիտի ըլլայ, վրան փոքրիկ նամակ մը մտնելու չափ նեղ և երկանկեկ ծակ մը պիտի ունենայ, վրայէն պիտի բացվի մտուկի պէս և կրկին փականքով պիտի գոցվի, որոնց բանալիներուն մէկը առնապետին քով պիտի մնայ, միւսը քննիչներին ծերագունին քով, և նախագահը պիտի կնքէ եկեղեցւոյ կնքովը։ Միացեալ թաղերու մէջ թաղապետին ու աւագերէցին քով կը մնան բանալիները։

28. Քըւէտուփին քով Ընտրողական ժողովին կողմէն գրված գոնէ երկու հոգի պիտի կենայ բանկալը, և քըւէթուղթ բերողը՝ քըւէարկուին ընտրողագիրը անոնց ցուցնելէն ետքը պիտի ձգէ քըւէթուղթը տուփին մէջ. և ընտրողագիրն իրեն քով պիտի մնայ, վասն զի երկրորդ քըւէարկութեան մը կամ յաւելուածական ընտրութեան մը համար (113 յօդ. Սահմանադրութեան) կրնայ հարկաւորիլ։

29. Միացեալ թաղերը իւրաքանչիւրն իր եկեղեցւոյն մէջ պիտի ընեն ասոյ իր քըւէարկութիւնը, և հետեւեալ առաւօտ կանուխ թաղին քահանան և թաղապետը ընտրողաց ցանկին հետ քըւէտուփը կերդուն թաղին եկեղեցին պիտի տանին ուր պիտի ըլլայ քըւէհամարը։

30. Քըւէտուփը պիտի դրվի քըւէարկութեան օրը արեւածագին, և պիտի վերնայ նոյն օրը արեւամուտին։ Դիշերը եկեղեցւոյ պահարանին մէջ ապահով կերպով պիտի պահվի։

31. Քրէական վերցած օրին մեռաց օրը քրէական համարը պիտի ըսկսի առաւօտեան ժամերգութեան աւարտումէն անմիջապէս ետքը, և նոյն օրը մի և նոյն նիստի մէջ պիտի ըմբենայ։

32. Քրէական համարի առեան պիտի բանայ Ընտրողական ժողովը անդամոց մեծագոյն մասին ներկայութեամբը, և եթէ դիւանին անդամները լման չ'ըլլան, իսկոյն պիտի ըլլէ բացակային տեղը։

Եթէ միացեալ Թաղերուն քարոզիչը կամ աւագերէցը կամ Թաղապետը (այսինքն Թաղական խորհրդին առենապետը) ներկայ ըլլան, անոնք ալ պիտի նստին ժողովին մէջ և անոր խորհրդակից ու գործակից պիտի ըլլան։

33. Առենապետը քրէական բերել կու տայ և քրէական համարը կ'ըսկսի սապէս.

Բոլոր ժողովին հսկողութեանը ներքեւ տուփը կը բացվի և քննիչները մէկիկ մէկիկ քրէթուղթերը կ'առնեն և պահարաններուն վրայի դրված անուններին նայելով այբուբենի կարգով կը շարեն ու կը դիզեն ամենն ալ տեղանի մը վրայ, և տուփը կը պարպի. ապա միջոցին մէջ՝ եթէ միացեալ Թաղերու քրէական կայ, միանգամայն անոնց քրէթուղթերն ալ կը շարվին զատ տեղաններու վրայ։

34. Եթէ դոց քրէական առանց պահարանի մերկ քրէթուղթ ելնէ, ոչինչ է իբրև պարապ թուղթ պատռել նետելու է։

35. Քրէթղթոց շարքը ըմբենալէն ետքը առենապետը ընտրողաց ցանկը ձեռքը կ'առնէ և կ'ըսկսի ցանկին կարգովը կարդալով մէկիկ մէկիկ կոչել ընտրողաց անունները. քանի որ առենապետը անուն մը կարդայ, քննիչին մէկը նոյն անունը կրող պահարանին կնիքը կը

քակէ, և ընտրողին ձեռագիր ստորագրութիւնը ա-
ռանապետին ներկայացնելէն ետքը՝ մէջի մերկ քըւ-
թուղթը մէկ հատիկ ըլլալը ձեռքով միայն ստուգե-
լով կը ձգէ պարպուած քըւէտուփին մէջ, և պահա-
րանը կու տայ երկրորդ քննիչի մը. այն միջոցին՝ առա-
նապետը * գիրը կը դնէ (*ը-էարիո- ըսելու համար)
այն անուան առաջը ընտրողաց ցանկին մէջ. այն
միջոցին նաև՝ երկու քննիչներ կամ քննիչ մ'ու առա-
նադպիրը՝ թէ՛ քըւէարկուաց և թէ՛ քըւէթըղթոց
թիւը մէկէն համրելու և քըւէարկութեան ժամա-
նակին մէջ բաղդատութիւնն ալ ըրած ըլլալու համար,
ամէն մէկ քըւէթուղթ ձգելուն մէյմէկ դիծ կամ
կետ կը դնեն թերթի մը վրայ։

36. Եթէ պահարանի մը մէջ ստորագրութիւն
չ'ըլլայ, կամ եղած ստորագրութիւնը չբկարդացվելու
կերպով գէշ և շփոթելի կերպով գրված ըլլայ անանկ
որ ոչ ոք ըլլալը չը հասկըցվի, և կամ ընտրողին անունը
ընտրողաց ցանկին մէջ ամենևին չը գտվի, այնպիսի
պահարան ալ և անոր պարունակած քըւէթուղթն ալ
ոչինչ պիտի համարվին։

Երբ ասանկով քըւէթուղթերն ըսպառին, եթէ
միացեալ թաղերու քըւէթուղթեր կան, անոնք ալ
մերկացնելու է իրենց պահարանէն անոնց ցանկովը և
վերոյիշեալ կերպով ձգելու է մայր քըւէտուփին մէջ
ուր կը խառնվին ու կը միանան թաղերը, և տուփը
դարձեալ կը լցվի։

37. Այս գործողութիւնները լմննալէն ետքը՝
դարձեալ տուփը կը բացվի, և քըւէթուղթ համրող
քննիչները կը ծանուցնեն քըւէարկուաց և քըւէթըղ-
թոց թիւը որ կ'արձանագրվի։

Այս արձանագրութենէն ետքը՝ քննիչին մէկը
կ'առնէ քըւէթուղթերը մէկիկ մէկիկ կը բանայ և
ատենապետին կու տայ որ բարձր ձայնով կը կարդայ

և առեղծվերը ընտրելաց ցանկին մէջ անուններուն առջեւ նշանակելով քրիստոնեները կ'արձանագրէ. առեղծատեսը կարդալէն ետքը կու տայ քրիստոնէութիւնը մեւ քննիչի մը որ ան՝ ալ կը կարդայ և երրորդ քննիչը կ'արձանագրէ. և ինքն առեղծատեսը նոյն միջոցին մէջ ուրիշ անուն մը կը կարդայ։

Եթէ ընտրելաց ցանկէն դուրս եղած անուն եղնէ քրիստոնէութենէ, այն անունն ալ կ'աւելցնի ցանկին մէջ։

Քրիստոնէները կարդացուած առեղծ Ընտրողական ժողովին մէջէն ուզողը կրնայ ցանկ մ'ալ ինք առնել և քրիստոնեները ինք ալ իր կողմէն նշանակել։

38. Եթէ այնպիսի քրիստոնէ պատահի որ ըստ ընդհանրութիւն ունենայ կամ քրիստոնէական ինքզինքը յայտնելու նշան մ'ունենայ մէջը, այն քրիստոնէն ընդունելի չ'է. նմանապէս վերէն ի վար կարդալ չը գրուած անուններու քրիստոնէն անընդունելի է եթէ ուզուած երեսփոխանաց թիւէն աւելի անուն պարունակէ. վերէն ի վար կարդալ գրուած և ուզուած երեսփոխանաց թիւէն աւելի կամ պակաս անուն պարունակող քրիստոնէն ընդունելի է, բայց նոյն թիւէն աւելի գրուած եռքի անունները համարելի չ'են. — նմանապէս երբ այնպիսի քրիստոնէ եղնէ որոյ մէջ ընտրելաց կամ ընտրելիի մը անունը չը կարդացուելու կերպով գէշ գրուած կամ ուրիշ համանուններու հետ շփոթուելու և ոչ ալ ըլլալը չը հասկցուելու կերպով պակաս գրուած ըլլայ, այն անունը քրիստոնեի մէջ չը պիտի մնանէ (Յօդ. 23)։

39. Եթէ քրիստոնէութիւնը 300 էն աւելի չ'ըլլայ և եթէ ժամանակն ալ ներէ, դիւանը կրնայ ինք ընել քրիստոնեները և ընդունել. իսկ եթէ աւելի ըլլայ և ժամանակն ալ չը ներէ, քրիստոնեները մի և նոյն նիւթի մէջ ընդունելու համար՝ առեղծատեսը պէտք եղածին չափ սեղաններ դնել կու տայ և սեղաններուն կը բաժնէ քրիս-

ուխտաւորմանները։ Դիւանը կամ ժողովին մէջէն և կամ ներկայ գտնուող ընտրողաց մէջէն յաւելուածական քննիչ ներ կ'որոշէ սեղան դրաւ գոնէ չորս հոգի։ Ամեն մէկ սեղանի դրաւ՝ քննիչին մէկը կը կարդայ կու տայ մէ-կալին և միւս քննիչները ընտրելեաց ցանկին մէջ անուան առջեւ քուէները նշանակելով կ'արձանագրեն։ Այն միջոցին դիւանին անդամները հսկողութիւն պիտի ը-նեն քուէհամարի գործողութեանց։

40. Քուէթղթաց ընթերցումը ըմբնալէն ետքը՝ երկու արձանագրութիւնները կը բաղդատուին, և ճըշ-դրտութիւնը ծանուցուելէն ետքը՝ դիւանը քուէհա-մարը կ'ընէ, և ամեն մէկ ընտրելեաց ոքքան քուէ ունե-նիը հաշուելէն ետքը՝ քուէհամարի թերթը առնա-պետին ձեռօք կը մատուցնէ նախագահին, որ իւրա-քանչիւր ընտրելոց ոքքան քուէ ստացածը ծանուց-նելով՝ քուէարկութեան արդիւնքը կը յայտնէ և "Ազգային երեսփոխան" կը հռչակէ՝ թաղէն քանի երես-փոխան ուզած է նէ այնքան անձինք որոց անունները քուէարկուաց կէսէն աւելին քուէն ստացած են. (107 Յօդ. Սահմանադրութեան)։

41. Եթէ առանկով՝ ուզած երեսփոխանաց թի-ւը չը լրնի առաջին անդամին, ընտրեալները մէկդի առնելով՝ մնացածին համար ընտրութիւնը կը շարու-նակուի միւս կիրակին ըստ երկրորդ հատուածին 105 յօդ-ուածին Սահմանադրութեան, և երկրորդ քուէարկու-թիւն կ'ըլլայ։

42. Ընտրողական ժողովը իսկոյն պիտի ծանուցնէ ընտրողաց այս երկրորդ քուէարկութեան հարկաւո-րութիւնը և միանգամայն քուէատուին երկրորդ անգամ դրուելու օրը, որ գոնէ ծանուցումէն երեք օր ետ-քը պատահած ոչնելի օրուան մը մէջ կրնայ ըլլալ կամ չէ նէ հետեւեալ կիրակին, և միւս օրը քուէհամարը կը կատարուի։

43. Երկրորդ քաւէարկութիւնը նոյն և նման առ-
ջինին պէս կ'ըլլայ, և սա դիւրութիւնն ունի որ ընտ-
րողագիրներն արդէն բաժնված են և ցանկերը պատ-
րաստ. ընտրողաց ցանկը նորէն չը բացվիր և նորէն
ընտրողագիր չը տրվիր. միայն ընտրողաց ցանկին մէջ
գրելողներէն ընտրողագիրը կորուսանող պատահի նէ ա-
նոր միայն կը տրվի։ Որ անուններով նորէն ընտրե-
ւոց ցանկ չը կրնար շինվիլ, այլ առջի քաւէարկու-
թեան մէջ ո՛ր անուններու քաւէ եւաւ նէ, անոնց
մէջ էն շատ քաւէ ստացողներէն՝ մնացած երեսփո-
խանաց թիւին երկապատիկ թիւովը անուն կ'առնվի,
և երկրորդ քաւէարկութիւնը օրինաւորապէս անոնց
վրայ միայն կ'ըլլայ. ուստի ընտրելեաց երկրորդ ցանկը
այն պայմանին համեմատ պիտի շինվի։

44. Այն պայմանին համեմատ նաև երկրորդ քա-
ւէարկութիւնը առջինէն կը տարբերի քաւէից արդիւն-
քովը։

Առաջին քաւէարկութեան մէջ՝ քաւէից արդիւնքը
Բացարձակ առաւելագոյնով կ'որոշվի, ըսել է՝ տրված քաւէ-
ներուն մեծագոյն մասը այսինքն կէսէն աւելին ստա-
ցողները ընտրված են։

Իսկ երկրորդ քաւէարկութեան մէջ՝ քաւէից արդ-
իւնքը համեմատական առաւելագոյնով կ'որոշվի, ըսել է՝
տրված քաւէներուն քանի՛ ըլլալը ամենաւելին չը նայե-
լով, որոնք որ իրարմէ աւելի քաւէ ստացած են՝ ա-
նոնք ընտրված կը համարվին։

Թէ առաջին և թէ երկրորդ քաւէարկութեան մէջ՝
երբոր քաւէից հաւասարութիւն պատահի քանի մ'ան-
ձանց վրայ, երիցագոյնն ընտրեալ է։

Այն պայմանով՝ ուզված երեսփոխանաց թիւը երկ-
րորդ քաւէարկութեամբ կը լրվի հարկաւ և ընտրու-
թիւնը կ'աւարտի։

45. Քաւէարկութեանց արդիւնքը յայտնվելէն

և երեսփոխանաց ընտրութիւնը հաստակելէն ետքը՝ անմիջապէս պէտք է այրել Ընտրական ժողովին ներկայութեանը բոլոր ընդունելի քրէթուղթերը, և անընդունելիները առեղծութեան կցելու է։

46. Ամեն ընտրական ժողով իր թաղէն ընտրուած երեսփոխանաց անունները ազգային Վարչութեան պիտի ներկայացնէ առ Սրբազան Պատրիարքն ուղեալ տեղեկագրով մը, որոյ մէջ պէտք է ճշտիւ և անշփոթելի կերպով նշանակուած ըլլան ընտրեալ երեսփոխանաց անունները, բնակութիւնն ու արհեստը։ Այն տեղեկագիրն ստորագրեալ պիտի ըլլայ Ընտրական ժողովին ներկայ դտուած անդամներէն։

47. Ընտրական ժողովը երկու օրինակ պիտի ունենայ ընտրական գործողութեանց առեղծութիւնը, որոյ մէջ քրէարկութեան և քրէհամարի բոլոր պարագաները ճշտիւ նշանակեալ պիտի ըլլան և նիստերը դիւանին անդամներէն ստորագրեալ։ Առեղծութեան մէկ օրինակը տեղին Թաղական խորհուրդին պիտի աւանդէ, և միւս օրինակը ընտրութեանց տեղեկագրին հետ ի Պատրիարքարան պիտի ղրկէ։ Հոս կ'աւարտէ Ընտրական ժողովին իր պաշտօնը։

48. Թաղական խորհուրդը՝ ընտրութեանց ամենալէն ետքը՝ ընտրողաց ցանկը բացադրեալ պիտի պահէ իր խորհրդարանին մէջ, և անոր վրայ տարիէ տարի սրբագրութիւն պիտի ընէ, տարիքը լրացողներուն անունը գրելով, վախճանողներուունը աւրելով, և այլն։

49. Թէ կեդրոնական Ընդհանուր ժողովին կազմութիւնը լրացնելու համար դաւառներէն ուղղուած ազգային երեսփոխանաց ընտրութիւնը, և թէ դաւառական Ընդհանուր ժողովները կազմելու համար թեմերէն ուղղուած դաւառական երեսփոխանաց ընտրութիւնը այն հրահանգին երկրորդ մասը կը կազմեն որ ընդ հաւաք պիտի տրուի։

50. Սրբազան Պատրիարքը յատուկ հրամանագրով պիտի հաղորդէ նոր կոչ հրահանգը Պօլսի ամէն եկեղեցեաց ու ի տես ժողովրդեան բացատրեալ պիտի մնայ, ինչպէս նաև Պատրիարքական հրամանագրին օրինակը, մինչեւ ընտրութեանց աւարտումը։

Այն հրահանգէն ապեալ բազմաթիւ օրինակներ Սահմանադրութեան տեսակներուն հետ պիտի բաշխուի ամէն ընտրողական ժողովց։

Ամբողջ առժամանակեայ Վարչութեան ժողովին մէջ խորհրդակցութեամբ խմբագիր անդամոց Սահմանադրական ժողովին։

Ի Պատրիարքարան Հայոց. 9 Յունիս 1860։

ՊԱՏՐԻԱՐՔ Կ. ՊՕԼՍԻ

ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ց. ՄԻՒՀԻՆՏԻՍԵԱՆ